**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/134 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2026 թվականի հունվարի 13-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/134-5 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հուլիսի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ գնման առարկա հանդիսացող ապրանքի լրացուցիչ քանակության ձեռքբերման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** Կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Պայմանագրի 3.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «3.1 Պայմանագրի գինը կազմում է 29,343,046.19 (քսանինը միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար քառասունվեց դրամ տասնինը լումա) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

2. Պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը՝ 13-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 24-րդ, 31-րդ, 34-րդ, 44-րդ և 76-րդ չափաբաժինների մասով փոփոխեվլ և հաստատվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագիր 2-ի Հավելված N 1-ի:

3. Պայմանագրի Հավելված N 3-ով և Պայմանագրի շրջանակում 2026 թվականի հունվարի 29-ին կնքված N 1 Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը՝ 13-րդ, 14-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 24-րդ, 31-րդ, 34-րդ, 44-րդ և 76-րդ չափաբաժինների մասով փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագիր 2-ի Հավելված N 2-ի:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 8.5 կետի համաձայն:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**